Հավելված 5
«ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2019-2021 թթ-ի կարիքների համար հեռախոսային կապի ծառայությունների գնման ընթացակարգ

ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2-1

ք.Երևան ____/_____/2019թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն -ը ի դեմս Արտակ Գրիգորյան-ի, որը գործում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն -ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Յուքոմ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Եսայան-ի, որը գործում է Յուքոմ ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2019-2021 թթ-ի կարիքների համար հեռախոսային կապի ծառայությունների գնման ընթացակարգ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,
բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի

պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 66000000.00 (վաթսունվեց միլիոն) , ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո

ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: [1]

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: [2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման

նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևան-քով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

---

[1]Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

[2]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՑՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Հասցե՝ Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900011019321

01506515

Արտակ Գրիգորյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by GRIGORYAN ARTAK 4010670134
Date: 2019.01.22 13:19:42 AMT

ԿԱՏԱՐՈՂ

Յուքոմ ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Գ.Լուսավորիչ 9

Ամերիաբանկ

1570043102134100

00024873

Հայկ Եսայան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by ASATURYAN KAREN 4010830662
Date: 2019.01.21 17:56:37 AMT

Հավելված
____/_____/2019թ. կնքվ
ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2 ծածկագրով պայմանա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը.	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	64211100/501	Ներկայացվում է ստորև	դրամ	66000000.00	1	ՀՀ տարածքում՝ ըստ տեխնիկական բնութագրով սահմանված ցանկի	Ֆինանսակ միջոցն նախատեսվելու պայմանագիրն ո մեջ մտնելուց հետ օրացուցային օր ընթացքում՝ մի տվյալ տար դեկտեմբերի 3

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար կապի համալիր ծառայություններ

Ծառայությունները ներկայացնում են լոկալ ցանցի (օպտիկամալուխային, լարային, անլար), ֆիքսված քաղաքայի ներքին հեռախոսահամարների ինչպես նաև բջջային հեռախոսահամարների ինտեգրման հնարավորությամբ համակ (այսուհետ՝ համակարգ), որը պետք է ապահովի.

1. Տվյալների փոխանցման ցանցի մեկ կետի տրամադրում գլխամասում,

2. Ներքին, քաղաքային և բջջային հեռախոսակապ (Web ինտերֆեյսի միջոցով ամբողջական համակա կարգավորումների և մոնիտորինգի իրականացման հնարավորությամբ),

3. Բջջային հեռախոսահամարները պետք է ունենան ուղիղ հասանելիություն մեկ վիրտուալ կայանի հետ,

4. Քաղաքային հեռախոսահամարները բաղկացած են 209 համարից (ըստ ցանկության ավելանում է) հիմնալ բազմագծային համար և 252 ներքին համարներից (ըստ ցանկության ավելանում է), պետք է ներառի նաև 360 ր անվճար զանգահարելու հնարավորություն, դեպի ՀՀ Քաղաքային ցանց, յուրաքանչյուր համարի համար:

5. Բջջային հեռախոսահամարները թվով մինչև 300 հատ պետք է գործեն ինչպես առանձնացված, այնպե հնարավորություն ունենան կատարել ելքային զանգեր մեկ հիմնական հեռախոսահամարի միջոցով, իրար մեջ անվճ խոսելու հնարավորությամբ:

6. Յուրաքանչյուր քաղաքային և բջջային հեռախոսահամարը պետք է ունենա նաև իր ներքին համարը:

7. Համակարգում ներգրավված բոլոր հեռախոսահամարները (բջջային, քաղաքային) պետք է ունենան հետև հնարավորությունները՝

ա. Կարճ համարանիշներ

բ. Բազմագծային մուտքային և ելքային զանգերի հնարավորություն

գ. Կոնֆերանս զանգ

դ. Զանգերի ձայնագրություն

ե. Ձայնային մենյու - IVR (Interactive voice response).

8. Ամբողջական համակարգի կարգավորումների և մոնիտորինգի հնարավորություն Web ինտերֆեյսի միջոցով:

Բջջային հեռախոսակապ տրամադրելիս

Կատարողը պարտավոր է.

Պատվիրատուի կարիքների համար տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխարհագրորեն ամրակցվ համարագրման պլանից հատկացված մինչև 300 բջջային հեռախոսահամարներ՝ որոնք հնարավորություն կտ Պատվիրատուին ամրակցված վայրում/վայրերում ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով իրական ժամանակ կատարելու և ստանալու ներհանրապետական և/կամ միջազգային զանգեր, GSM 900/1800 ստանդարտի:
Անհրաժեշտության դեպքում տրամադրել հեռախոսներ:

Պատվիրատուի պահանջով մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսահամարների ընթաց հաշվեկշիռների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել:

Կատարողականը ներկայացնելիս տրամադրել յուրաքանչյուր հեռախոսահամարի հաշվետու ամսվա ընթացք սպառած րոպեների քանակը՝ ըստ համապատասխան սակագների /նաև 0-ական սակագնով սպառած րոպեն քանակը/:

Բջջային հեռախոսակապի ծառայություններին ներկայացվող ընդհանուր պահանջներ.

1. Բաժանորդների փակ խմբում անվճար հեռախոսազանգերի ծառայության տրամադրում ամբողջ սոցիալա ծառայության ոլորտում գործող բոլոր կառույցների բջջային հեռախոսահամարների միջև:
2. Հարկային հաշիվների ներկայացումը, ոչ ուշ քան ընթացիկ ամսվա մինչև 10-ը:
3. Պատվիրատուի դիմելու դեպքում ապահովել հեռախոսահամարների մասին տեղեկությունների ստացու ծառայություններ մատուցողի կայքի միջոցով:
4. Ծառայության մատուցումը և սպասարկումը պետք է իրականացվի համապատասխան ՀՀ էլեկտրոնայ հաղորդակցության մասին օրենքի:

5. Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը (ներառյալ, բա չսահմանափակվելով՝ խոսակցության փաստը, զանգողի և զանգը ստացողի ինքնությունը և նրանց գտնվելու վայրերը, հեռախոսացանցով անցնող այլ հաղորդումների պարունակությունը և չպետք է գրանցի կամ պահպանի այդ տվյալներ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ դատարանի որոշման համաձայն:
6. Բաժանորդների շուրջօրյա սպասարկում շաբաթվա բոլոր օրերին
7. Անհատական ենթահաշվով աշխատող կանխավճարային կորպորատիվ համարների տրամադրում համակար աշխատակիցների ընտանիքի անդամների համար
8. Անհատական կորպորատիվ մասնագետի կողմից սպասարկում
9. Ծախսերի վերահսկման ծառայություն համապատասխան սահմանչափերի վերաբաշխմամբ մեկ պայմանագրի ներքո
10. Համարների սահմանաչափերի կարգավորում, համապատասխան սահմանաչափին հասնելու դեպքում հետվճարայ ծառայությունների կասեցում, անհատական ենթահաշվով կանխավճարային սկզբունքով ծառայությունն օգտագործում
11. Միջազգային հեռախոսազանգերի տրամադրում բջջային հեռախոսակապի միջոցով
12. Ռոմինգ ծառայության անվճար ակտիվացում
13. Ռոմինգի հատուկ սակագներ եվրոպական երկրների համար
14. Փաթեթում ներառված հեռախոսահամարների չսպառված սահմանաչափի /լիմիտ/ մասով միմյանց փոխանց հնարավորություն

Համակարգի ներդրումից հետո Կատարողի կողմից ծառայությունները մատուցվելու են 3 տարվա ընթացք մինչև 2021 թվականը ներառյալ:

ՑԱՆԿ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի ֆիքսված և ներքին հեռախոսահամարների

Հ/Հ	Ստորաբաժանման անվանում	Գտնվելու վայրը	Ֆիքսված հեռ.	Ներքին հեռ.
		ՀՀ ԱՍՀՆ		
1	ՀՀ ԱՍՀՆ	ք.Երևան, Կառավարական տուն 3	49	65
		ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության գրասենյակ		

1	Զբաղված. Գործ.	ք.Երևան,Կ. Ուլնեցու 68	22	27
	Զբաղվածության տարածքային կենտրոններ			
1	Աշտարակի զբաղված. տարածք. կենտր	ք.Աշտարակ, աշտարակեցու հրապարակ 7	3	2
2	Ապարանի զբաղված. տարածք. կենտր	ք.Ապարան, բաղրամյան 26	2	2
3	Ծաղկահովիտի.զբաղված.տարածք.կենտր	գ.Ծաղկահովիտ, հոկտեմբերյան 2	2	2
4	Թալինի զբաղված.տարածք.կենտր	ք. Թալին, գայի 1,	2	2
5	Վեդու զբաղված.տարածք.կենտր	ք. Վեդի, Արարատյան 55	2	2
6	Արարատի զբաղված.տարածք.կենտր	ք. Արարատ, Շահումյան 34	2	2
7	Արտաշատի զբաղված.տարածք.կենտր	ք. Արտաշատ, իսակով 47,	2	2
8	Մասիսի զբաղված.տարածք.կենտր	ք. Մասիս, կենտրոն հրապարակ 4,	2	2
9	Արմավիրի զբաղված.տարածք.կենտր	ք.Արմավիր, աբովյան 137	2	2
10	Բաղրամյանի զբաղված.տարածք.կենտր	գ. Բաղրամյան, բաղրամյան 4, հասանելի չենք	2	2
11	Վաղարշապատի զբաղված.տարածք.կենտր	ք. Վաղարշապատ, մաշտոցի 1,	2	2
	Սևանի զբաղված.տարածք.կենտր	ք. Սևան	3	2
13	Ճամբարակի զբաղված. տարած. կենտ	ք. Ճամբարակ, նժդեհ 125,	2	2
14	Մարտունու զբաղված. տարած. կենտ	ք.Մարտունի, շահումյան 2,	2	2
15	Սևանի զբաղվածութ.տարածք.կենտր	ք. Սևան, նաիրյան 164,	3	2
16	Վարդենիսի զբաղված. տարած. կենտ	ք. Վարդենիս, Ռոմանի 98,	2	2
17	Վանաձորի զբաղված. տարածք. կենտր	ք. Վանաձոր, նժդեհ 14,	4	2

18	Ալավերդու զբաղված. տարածք. կենտր	ք. Ալավերդի, երևանյան խճուղի 5,	2	2
19	Սպիտակի զբաղված. տարածք. կենտր	ք. Սպիտակ, շահումյան 2,	2	2
20	Ստեփանավանի զբաղված. տարածք. կենտրոն	ք. Ստեփանավան, սուրբ նշան 12,	2	2
21	Տաշիրի զբաղված. տարածք. կենտրոն	ք. Տաշիր, սարգսյան 94,	2	2
22	Աբովյանի.զբաղված.տարածք.կենտր	ք. Աբովյան, բարեկամության 1,	3	2
23	Հրազդանի զբաղվածության տարածք. կենտր	ք. Հրազդան, կենտրոն թաղ.6,	3	2
24	Եղվարդի զբաղվածության տարածք. կենտր	ք.Եղվարդ, երևանյան 1,	2	2
25	Չարենցավանի .զբաղված.տարածք.կենտր	ք.Չարենցավան, 4-րդ թաղ, 18 շենք,	2	2
26	Ամասիայի զբաղված.տարածք.կենտրոն	գ.Ամասիա, 26 փող.,	1	2
27	Աշոցքի զբաղված.տարածք.կենտրոն	գ.Աշոցք, հրապարակ 1,	1	2
28	Մարալիկի զբաղված.տարածք.կենտրոն	ք.Մարալիկ, մադաթյան 1,	1	2
29	Արթիկի զբաղված. տարածք. կենտրոն	ք.Արթիկ, հրապարակ 1,	2	2
30	Գյումրու զբաղվածությանտարածք. կենտր	ք.Գյումրի, մանուշայան 5/5,	2	2
31	Գորիսի զբաղված. տարածք. կենտր	ք.Գորիս, մաշտոցի 3,	2	2
32	Կապանի զբաղվածության տարածք. կենտր	ք.Կապան, լեռնագործների 4,	2	2
33	Մեղրու զբաղված. տարածք. կենտր	ք.Մեղրի, անդրանիկի 2,	1	2

34	Սիսիանի զբաղված. տարածք. կենտր	ք.Սիսիան, սիսական 41,	2	2
35	Եղեգնաձորի զբաղվածության տարածք. կենտր	ք.Եղեգնաձոր, շահումյան 5,	2	2
36	Վայքի զբաղված.տարածք.կենտրոն	ք.Վայք, շահումյան 14,	1	2
37	Ջերմուկի զբաղված. տարածք. կենտր	ք.Ջերմուկ, մյասնիկյան 8	2	2
38	Իջևանի զբաղված. տարածք. կենտր	ք.Իջևան, վասիլյան 2,	2	2
39	Նոյեմբերյանի զբաղված. տարածք. կենտր	ք.Նոյեմբերյան, երևանյան 4,	2	2
40	Բերդի զբաղված. տարածք. կենտրոն	ք.Բերդ, լևոն բեկի 5,	2	2
41	Դիլիջանի զբաղված. տարածք. կենտրոն	ք.Դիլիջան, մյասնիկյան 66,	2	2
42	Երևանի'կենտրոն'տարածք.կենտ	Ք.Երևան, ջրաշատի 1,	1	2
43	Էրեբունի.զբաղված.տարածք.կենտր	Ք.Երևան, խորենացի 213,	2	2
44	Արաբկիրի զբաղված.տարածք.կենտր	Ք.Երևան, կոմիտասի 49/2,	3	2
45	Մալաթիա_Սեբաստիա.զբաղված.տարածք.կենտր	ք.Երևան, սեբաստիա 32,	3	2
46	Աջափնյակի զբաղվածության տարածք.կ.	Ք.Երևան, բաշինջաղյան 100,	3	2

47	Դավիթաշենի զբաղվածության տարածք.կ.	Ք.Երևան, 3-րդ թաղ, վարչական շենք,	2	2
48	Շենգավիթի.զբաղված.տարածք.կենտր	Ք.Երևան, հովսեփյան 3,	2	2
49	Քանաքեռ-զ զբաղվածության տարածք.կ.	Ք.Երևան, անհաղթի 23,	2	2
50	Ավանի զբաղվածության տարածք.կ.	Ք.Երևան, խուդյակով 12,	2	2
51	Նոր.Նորքի.զբաղված.տարածք.կենտր.	Ք.Երևան, բաղյան 2,	3	2
ՀՀ ԱԱՀՆ աշխատակազմի ՀՀ ԲՍՓ գրասենյակ				
1	ՀՀ ԲՍՓ գործակալություն	ք.Երևան, Արմենակյան 129,	9	10
ՀՀ ԲՍՓ հանձնաժողովներ				
2	Երևանի թիվ 1 ԲՍՓՀ	ք. Երևան, Նոր-Նորք, Գյուրջյան 8,	-	1
3	Երևանի թիվ 2 ԲՍՓՀ	ք. Երևան, Հ.Քոչար 21	1	1
4	Երևանի թիվ 3 ԲՍՓՀ	ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55 ա,	1	1
5	Երևանի թիվ 4 ԲՍՓՀ	ք. Երևան, Անդրանիկի 2ա,	1	1
6	Երևանի թիվ 5 ԲՍՓՀ	ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55 ա,	1	1
7	Երևանի թիվ 6 ԲՍՓՀ	ք. Երևան, Տիգրան Մեծի 36 ա,	1	1
8	Երևանի թիվ 7 ԲՍՓՀ	ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55 ա,	1	1
		ք. Էջմիածին. Մաշտոցի 1	-	1
9	Հոգեբուժական մասնագիտացված ԲՍՓՀ	ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55 ա,	1	1
10	Ակնաբանական մասնագիտացված ԲՍՓՀ	ք. Երևան, Հ. Ներսիսյան 7,	1	1

11	Մանկական մասնագիտացված ԲՍՓՀ	ք. Երևան, Արմենակյան 129,	-	1
12	Արարատի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	ք. Արտաշատ, Իսակովի 47	-	1
		ք. Արարատ, Շահումյան 34	-	1
13	Արարատի մարզի թիվ 2 ԲՍՓՀ	ք. Վեդի, Արարատյան 55	-	1
		ք. Մասիս, Կենտրոնական հրապ. 4	-	1
14	Արմավիրի մարզի ԲՍՓՀ	ք. Արմավիր, Աբովյան 137,	1	1
		գ. Բաղրամյան, Բաղրամյան 1,	-	1
15	Արագածոտնի մարզի ԲՍՓՀ	ք. Աշտարակ, Նարեկացու 61	-	1
		ք. Թալին , Գայի 1	-	1
		գ. Եղվարդ, Չարենցի 56	-	1
16	Կոտայքի մարզի ԲՍՓՀ	ք. Աբովյան, Հատիսի 6	1	1
		ք. Չարենցավան, Աբովյան փ, 8	-	1
		ք. Հրազդան, Մ. Բաղրամյան թաղ, Պուրակային 32	-	1
17	Գեղարքունիքի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	ք. Գավառ, Շահումյան 14	1	1
		ք. Սևան, Նաիրյան փ, 164	-	1
18	Գեղարքունիքի մարզի թիվ 2 ԲՍՓՀ	ք. Մարտունի, Գետափնյա 2/17	-	1

		ք. Վարդենիս. Ռոմանի 98	-	1
19	Շիրակի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	ք. Գյումրի, Շիրակացի 162,	1	1
		ք. Ախուրյան, Ախուրյանի խճուղի 1	-	1
		գ. Աշոցք, Համայնքի վարչական շենք, Հրապարակ 1	-	1
20	Շիրակի մարզի թիվ 2 ԲՍՓՀ Շիրակի մարզի թիվ 2 ԲՍՓՀ	ք. Գյումրի, Շիրակացի 31,	1	1
		ք. Մարալիկ. Մադաթյան 1 7464619 հասանելի չենք	-	1
		ք. Արթիկ, Բաղրամյան 2,	1	1
21	Լոռու մարզի թիվ 1 ԲՍՓՀ	ք. Վանաձոր, Նժդեհի 14,	1	1
22	Լոռու մարզի թիվ 2 ԲՍՓՀ	ք. Սպիտակ, Իտալական 10,	1	1
		ք. Ստեփանավան , Գ. Նժդեհի 19 ա	-	1
23	Լոռու մարզի թիվ 3 ԲՍՓՀ	ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 3/6,	1	1
		ք. Տաշիր, Գրիբայեդովի 3	-	1
		ք. Նոյեմբերյան, Զ. Անդրանիկի 3/6	-	1
24	Վայոց Ձորի մարզի ԲՍՓՀ	ք. Եղեգնաձոր, Վայքի 1,	1	1
		ք. Վայք, Շահումյան 14	-	1

25	Սյունիքի մարզի թիվ 1 ԲՍՓՀ	ք.Կապան, Ազատամարտիկների 8,	1	1
		ք.Մեղրի, Օհանջանյան 4	-	1
26	Սյունիքի մարզի թիվ 2 ԲՍՓՀ	ք.Գորիս, Օրբելյանների 5	1	1
		ք.Սիսիան, Չարենցի 14	1	1
27	Տավուշի մարզի ԲՍՓՀ	ք.Իջևան, Երիտասարդական 2 ա	1	1
		ք.Դիլիջան, Մյասնիկյան 66,	-	1
		ք.Բերդ, Լևոն Բեկի 5	-	1
		ք.Ճամբարակ, Պ. Սևակի 7	-	1
Ամբողջը			209	253

Ֆիքսված հեռախոսահամարները ամսական անվճար տրամադրվող 360 րոպեն լրանալուց հետո պետք սպասարկվեն համաձայն ստորև բերված սակագների (սակագները լրացվում են գնման ընթացակարգի մասնակ կողմից) և տարեկան առավելագույն խոսելաժամանակի (համախառն՝ բոլոր հեռախոսահամարների համար) ցան տարվա կտրվածքով բոլոր հեռախոսահամարների համար.

N	Հեռախոսազանգերի ուղղությունները	Սակագին (ՀՀ դրամ /րոպե)		Յուրաքանչյուր ամսա բաժանորդային վարձ, ՀՀ դրամ	Առավելագույն խոսելաժամանա /րոպե/տարեկան/
		Անվճար րոպեներ	Վճարովի րոպեներ	2500	
1	Դեպի 010,011, 012 և 060 կոդով և ՀՀ մարզեր ֆիքսված հեռախոսակապ	360	5		600000
2	Դեպի ՀՀ բջջային ցանցեր		28		125400

3	Դեպի ԼՂՀ բջջային հեռախոսակապ		28		18000
4	Դեպի ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր		16		10000
5	Միջազգային զանգեր		500		30000

Բջջային հեռախոսահամարները պետք է սպասարկվեն համաձայն ստորև բերված սակագների (սակագն լրացվում են գնման ընթացակարգի մասնակցի կողմից) և տարեկան առավելագույն խոսելաժամանակի (համախա բոլոր հեռախոսահամարների համար) ցանկի՝ տարվա կտրվածքով բոլոր հեռախոսահամարների համար.

Հիմնական ծառայություններ	Առավելագույն խոսելաժամանակ /րոպե/հատ տարեկան/	Յուրաքանչյուր ամսվա բաժանորդային վարձ, ՀՀ դրամ
Ամսվա վճար մեկ հեռախոսահամարի համար		50
Զանգեր խմբի ներսում	անսահմանափակ	0
Զանգեր դեպի ՀՀ Սոցիալական ապահովության նախարարության կորպորատիվ բջջային փաթեթի բաժանորդներին	անսահմանափակ	0
Զանգեր ցանցի ներսում	300000	5
Զանգեր դեպի այլ տեղական բջջային ցանցեր (ներառյալ ԼՂՀ)	100000	15
Զանգեր Հայաստանի ֆիքսված ցանցեր	100000	15
SMS ցանցի ներսում	2000	15
SMS դեպի այլ տեղական բջջային ցանցեր	2000	15
SMS խմբի ներսում	3000	15
Միջազգային SMS	3000	20
Ռոումինգ Ռուսաստան, Վրաստան, Եվրոպա, Միջին Արևելքի երկրներ, ԱՄՆ	150	59, 150, 250, 500, 59
Միջազգային զանգեր Ռուսաստան, Վրաստան, Եվրոպա, Միջին Արևելքի երկրներ, ԱՄՆ	9200	50, 165, 85, 250, 15

Համակարգի ներդրումից հետո Կատարողի կողմից ծառայությունները մատուցվելու են 3 տարվա ընթացքո մինչև 2021 թվականը ներառյալ:

** Այս պայմանագրում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնք համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Հասցե՝ Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900011019321

01506515

Արտակ Գրիգորյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Յուքոմ ՍՊԸ

Հասցե՝ Երևան, Գ.Լուսավորիչ 9

Ամերիաբանկ

1570043102134100

00024873

Հայկ Եսայան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by ASATURYAN KAREN 4010830662
Date: 2019.01.21 17:56:25 AMT

Հավելված
____/_____/2019թ. կնք
ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2 ծածկագրով պայմանա

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թ												
			Ծառայության												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդ ե
1	64211100/501	հանրային հեռախոսային ծառայություններ													66 00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվու ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԿԱՏԱՐՈՂ
Յուքոմ ՍՊԸ

Հասցե՝ Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
900011019321
01506515
Արտակ Գրիգորյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հասցե՝ Երևան, Գ.Լուսավորիչ 9
Ամերիաբանկ
1570043102134100
00024873
Հայկ Եսայան

Digitally signed by ASATURYAN KAREN
4010[illegible]
Date: 2019.01.21 17:56:12 AMT

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
____/_____/2019թ. կնքված
ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված • գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	հանրային հեռախոսային ծառ							

	այություն ներ							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 3.1
____/_____/2019թ. կնքված
ԱՍՀՆ-ԷԱՃԾՁԲ-19/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Յուքոմ ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ._____ -ին կնքված N_____ գնման

պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով

Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
հանրային հեռախոսային ծառայություններ	դրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն